ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № _____ « » _____ 20 թ.

_____, այսուհետ՝ «Պատվիրատու» մի կողմից, և «Կարմիր Արև» ՍՊԸ-ն («ՏԷՏԷ Տուր» ապրանքային նշան), այսուհետ՝ «Կատարող», ի դեմս տնօրեն Տ. Թորոսյանի, ով գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով Զբոսաշրջային օպերատորը՝ հանդիսանալով ՀՀ կառավարության 2012թ.-ի դեկտեմբերի 27-ի թիվ 1691-Ն որոշմամբ սահմանված սոցիալական փաթեթի հանգստի ապահովման ծառայության մեջ ընդգրկված զբոսաշրջային օպերատոր, պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել հանգստի ապահովման համալիր ծառայություններ (այսուհետ՝ Զբոսաշրջային փաթեթ) և/կամ հյուրանոցային տնտեսության օբյեկտի կողմից մատուցման ենթակա հյուրանոցային ծառայություններ (այսուհետ՝ Հյուրանոցային փաթեթ) ՀՀ և ԼՂՀ տարածքում, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների դիմաց: Հանգստի ապահովման ծառայության նկարագրությունը բերված է սույն պայմանագրի 1.3 կետում: Զբոսաշրջային օպերատորի կողմից Հյուրանոցային փաթեթի իրացման դեպքում Զբոսաշրջային օպերատորը հանդես է գալիս որպես սույն պայմանագրի 1.3 կետում նշված հյուրանոցային տնտեսության օբյեկտի գործակալ՝ համաձայն Զբոսաշրջային օպերատորի և հյուրանոցային տնտեսության միջև կնքված գործակալության պայմանագրի և ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 42-րդ գլխի դրույթների:

1.2. Ծառայությունները մատուցված են համարվում Պայմանագրի 1.3 կետում նշված Ծառայությունների ժամկետի ավարտի պահին՝ եթե Պատվիրատուի կողմից Զբոսաշրջային օպերատորին հանգստի ավարտից հետո մեկ շաբաթյա ժամանակահատվածում չի ներկայացվել որևէ գրավոր կամ բանավոր առարկություն:

1.3. Փաթեթի տեսակը՝ ☐ Հյուրանոցային փաթեթ ☐ Զբոսաշրջային փաթեթ

Ծառայությունից օգտվում են՝ ☐ Պատվիրատուն և/կամ ☐ ընտանիքի ____ անդամ(ներ)

Հանգստի սկիզբ « » _____ 20____ թ ժամ _____ Հանգստի ավարտ « » _____ 20____ թ ժամ _____

Հանգիստ _____-ում

(զբոսաշրջիկի տեղաբաշխման վայրը, հյուրանոցի անվանումը)

Տրանսպորտ՝ ☐ միակողմանի ☐ երկկողմանի Տեսակը _____

Զբոսաշրջային փաթեթի ընտրության դեպքում

_____

(էքսկուրսիոն ծառայությունների դեպքում նշել երթուղին)

2. Կողմերի իրավունքներն ու պարտավորությունները

2.1. Կատարողը պարտավոր է՝

2.1.1. Ծառայությունները մատուցել պատշաճ որակով, ամբողջ ծավալով, պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետներում.

2.1.2. Պատվիրատուին տրամադրել Ուղեգիր, որում ներառված է Պայմանագրի 1.3 կետում նշված ծառայությունները և դրանց մանրամասները:

2.2. Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1. Պահպանել սույն պայմանագրով նախատեսված պայմաններն ու կանոնները,

2.2.2. Չխախտել հասարակական կարգը, պահպանել հրդեհային անվտանգության կանոնները,

2.2.3. Ժամանակավոր կացության և տարանցիկ վայրերում պատասխանատվություն կրել օրենքով սահմանված կարգով, այդ թվում՝ իր ապօրինի գործողությունների հետևանքով առաջացած նյութական վնասի փոխհատուցմամբ:

2.3. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.3.1. Ստանալ սույն պայմանագրով և շրջագայության ծրագրով նախատեսված զբոսաշրջային համալիր ծառայությունները,

2.3.2. Անձնական անվտանգության, կյանքի, առողջության, սպառողի իրավունքների և գույքի պաշտպանություն,

2.3.3. Ցանկացած ժամանակ ստուգել մատուցվող ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Զբոսաշրջային օպերատորի գործունեությունը,

2.3.4. Փոփոխել Պայմանագրի 1.3 կետում նշված ծառայությունները՝ նախապես համաձայնեցնելով Կատարողի հետ: Պայմանագրի 1.3 կետում կատարված փոփոխությունները հաստատվում է Կատարողի կողմից տրամադրված նոր Ուղեգրով:

3. Պայմանագրի գինը և հաշվարկների կարգը

3.1. Պայմանագրի 1.3 կետում նշված ծառայությունների ընդհանուր արժեքը կազմում է _____ (_____) ՀՀ դրամ: Պայմանագրում նշված հյուրանոցային տնտեսության կողմից մատուցման ենթակա ծառայությունների ընդհանուր արժեքը կազմում է՝ _____ (_____) ՀՀ դրամ:

3.2. Պատվիրատուի պատվերը Կատարողի կողմից հաստատելուց հետո Պատվիրատուն պարտավոր է վճարել պայմանագրային գինը Կատարողին՝ փոխանցելով այն վերջինիս հաշվարկային հաշվին կամ վճարել կանխիկ, իսկ ՀՀ Կառավարության կողմից սահմանված սոցիալական փաթեթի շահառուները վճարումները կատարում են ամենամսյա պարբերականությամբ՝ բայց ոչ ուշ քան պայմանագրի կնքումից հետո մինչև ընթացիկ տարվա ավարտը:

3.3 Պատվիրատուի կողմից առաջին վճարումը պետք է կատարվի Պայմանագրի կնքման պահից 15 (տասնհինգ) օրվա ընթացքում:

3.4. Սույն պայմանագրի գծով վճարված գումարները ենթակա են վերադարձման Պատվիրատուի գրավոր դիմումի հիման վրա 10 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Պատվիրատուն հրաժարվում է Պայմանագրով նախատեսված ծառայություններից և վերջինիս կողմից պահպանվել է պայմանագրի 4.1 կետում նշված ժամկետները: Ընդ որում սոցիալական փաթեթի գծով վճարված գումարները վերադարձվում են բացառապես սոցիալական փաթեթի սպասարկման համար բանկում բացված հատուկ հաշվեհամարին՝ գումարը փոխանցելու միջոցով:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Պատվիրատուի կողմից Պայմանագրով նախատեսված ծառայություններից հրաժարվելու դեպքում Վերջինիս Զբոսաշրջային օպերատորին վճարում է տուգանք հետևյալ կարգով՝

4.1.1. Ծառայությունների ընդհանուր արժեքի 25 տոկոսի չափով, եթե Պատվիրատուն պայմանագրից հրաժարվել է ոչ ուշ քան Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման սկզբի ժամկետից երկու աշխատանքային օր առաջ:

4.1.2. Ծառայությունների ընդհանուր արժեքի 50 տոկոսի չափով, եթե Պատվիրատուն պայմանագրից հրաժարվել է 4.1.1 ենթակետում նշված ժամկետի խախտմամբ կամ ընդհանրապես չի օգտվել Պայմանագրով նախատեսված ծառայություններից և Հյուրանոցային փաթեթի դեպքում առկա է հյուրանոցային տնտեսության օբյեկտի գրավոր ծանուցումը Զբոսաշրջային օպերատորին Պատվիրատուի կողմից հյուրանոցային ծառայություններից չօգտվելու մասին:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ֆորս-մաժոր)

Սույն պայամանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք, անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավել, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. Վեճերի լուծման կարգը

Սույն պայմանագրի գործողության ընթացքում ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պարտավորությունների լրիվ կատարումը:

7.2. Հյուրանոցային, տրանսպորտային և այլ ծառայություններ կարող են մատուցվել այլ կազմակերպությունների և/կամ անձանց կողմից (ծառայությունների մատակարարներ), որոնց հետ Կատարողն ունի համագործակցության պայմանագրեր: Համագործակցության պայմանագրով մատուցվող ծառայությունների անպատշաճ կամ ոչ լրիվ կատարման համար պատասխանատվություն է կրում համագործակցության պայմանագրով ծառայություն մատուցող կողմը:

7.3. Սույն պայմանագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 2 (երկու) օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկական օրինակ:

Փոխանցման հաշիվ № _____

Կատարող՝ «Կարմիր Արև» ՍՊԸ, Հաշվեհամար՝ 15700 75722720200, Բանկ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ

ՀՎՀՀ՝ 00866868, **Հասցե՝** Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, Կոմիտաս 42, **Կապ՝** 077 008338, 043 038338, 010 420896, tetetour.am , tetetour@inbox.ru

Պատվիրատու		Լրավցում է՝ եթե պայմանագիրը կնքվում է ենթագործակալական պայմանագրի շրջանակներում
Նույնականացման քարտ		
Հասցե		Ենթագործակալ՝
Աշխատավայր, հասցե		ՀՎՀՀ՝
Հեռախոս, էլ. հասցե		Հասցե՝
Գումարը		Կապ՝

Տնօրեն՝ _____ **Պատվիրատու՝** _____ **Ենթագործակալ՝** _____